



Մարտ 8, 1994

Գերաշնորհ՝
Տեր Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան
Առաջնորդ Ամերիկահայոց Արեւելեան Թեմի
630 Երկրորդ Պողոսայ
New York, NY 10016-4885

Յարգելի Սրբազան Հայր,


Այս գրութեամբ Ձեզի կը հաղորդեմ որ մեր Եկեղեցոյ Տարեկան Ծխական Ժողովը գումարուեցաւ Կիրակի, Փետրուար 27, 1994 Արևազայի Ժամերգութենէն վերջ, ժամը 1:00ին: Ներկայ էին իրենց լման տուրքերը վճարած իննսուներկու անդամներէն քառասուն եւ հինգը զոյացնելով մեծամասնութիւն: Օրում ղիւանը կը բաղկանար Բասըլ Արայանեանէ որպէս Ատենապետ եւ Լեզլի Պաղտասարեանէ որպէս Ատենադպիր:

Գաղտնի քուէարկութեամբ եկեղեցոյ Ծխական Խորհուրդի անդամ ընտրուեցան հետեւեալ անձինք՝ Տիգրան Արայանեան 36 քուէով, Սերոբ Տեմիրճեան 32 քուէով, Սեպուհ Ստորոբեան 28 քուէով, Բոպորթ Տոմարասի 26 քուէով իսկ որպէս փոխանորդ Հայկ Արմիանեան 22 քուէով:

Ընտրողական Ցանձնախումբի անդամ ընտրուեցան՝ Անիդա Արմիանեան 32 քուէով, Լուսինի Անտոնեան 29 քուէով, Բասըլ Արայանեան 26 քուէով իսկ որպէս փոխանորդ Ալիսա Հաչերեան 16 քուէով: Հաշուեքննիչ Ցանձնախումբի անդամ ընտրուեցան՝ Արշալիր Անտոնեան 32 քուէով, Ճէյ Պաղտասարեան 31 քուէով, Շերլ Արայանեան Կիտիըն 30 քուէով, իսկ որպէս փոխանորդ Սիմոնի Արայանեան Բասըլ 29 քուէով:

Ուստի կը խնդրեմ Ձեր Սրբազնութենէն որ բարեհաճիք վաւերացնել վերոյիշեալ ընտրութիւնները որպէսզի առիքը ունենանք ծխական խորհուրդի մոր ղիւանը ընտրելու հնարաւոր փութով: Ընդունեցէք մեր կանխայայտ շնորհակալութիւններն ու բարեմաղթանքները:

Յարգանքով՝


Նորայր Սարկաւազ Օտապաշեան
Հոգևոր Հովիւ

ST. GREGORY OF NAREK ARMENIAN CHURCH
678 Richmond Road
Richmond Heights, Ohio 44143
(216) 381-6590